ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՂԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>>
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշման դրույթներով կազմված հողաշինարարական գործի նյութերով՝ նախատեսվում ՀԷԿ-ի հակահրդեհային անվտանգության համար իրականացնել ջրավազանների կառուցապատման աշխատանքներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքում առկա են հողեր, որոնց նպատակային նշանակության փոփխությունից հետո կարող են տրամադրվել ավազանների կառուցապատման աշխատանքների և հողհատկացման համար, ուստի անհրաժեշտ ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Շաղատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողատեսքից՝ 0.065690հա և գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրերից 0.017028հա հողամասերը փոխադրել՝էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր նպատակային նշանակության՝էներգետիկայի հողեր գործառնական նշանակությամբ:

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի
քաղաքաշինության և տնտեսության ոլորտը
համակարգող բաժնի պետ՝ *Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*
04.10.2019թ

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՂԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>>
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՇԱԽՄԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Շաղատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողատեսքից՝ 0.065690հա և գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրերից 0.017028հա հողամասերը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր նպատակային նշանակության՝էներգետիկայի հողեր գործառնական նշանակությամբ փոխադրելուն հավանություն տալու մասին Սիսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Սիսիանի համայնքի բյուջեում եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի
քաղաքաշինության և տնտեսության ոլորտը
համակարգող բաժնի պետ՝ *Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*
04.10.2019թ